ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Հեռուստացույցը, համացանցը և զանգվածային տեղեկատվության մյուս միջոցները քաղաքակրթության մեծ նվաճումներն են, և դժվար է նույնիսկ պատկերացնել ժամանակակից մարդուն,մեկուսացված այդ միջոցներից: Հետազոտությունները, սակայն, ցույց են տալիս, որ դրանք տեղեկույթի անմեղ աղբյուրներ չեն: Նրանք մարդու հոգեկանի վրա ներգործելու, մարդկային այս կամ այն տիպը ձևավորելու հզոր ներուժ ունեն: Կախված նրանց ծառայություններից օգտվելու մեր ձևից, ներգործությունը կարող է լինել վնասակար կամ օգտակար: Այս առումով լուրջ վտանգներ է իր մեջ թաքցնում հատկապես համացանցը: Համաշխարհային տեղեկատվական այս սարդոստայնում կողք-կողքի ապրում են ճշմարտությունն ու սուտը, գեղեցիկն ու այլանդակը, վեհն ու ստորը: Կյանքի բավարար փորձ չունեցող մարդիկ, իսկ դրանք հիմնականում դեռահասներն են, չեն կարողանում տարբերել լավը վատից և հեշտությամբ կարող են ընկնել կեղծ գաղափարական հոսանքների, կեղծ արժեքների ազդեցության տակ:

Համացանցը չի տալիս մարդուն համակարգված գիտելիքներ, ինչն այնքան անհրաժեշտ է դեռահասներին: Այն տեղեկությունների, գիտելիքների, նկարների, տեսանյութերի ու խաղերի մի խայտաբղետ, անսահման հարուստ աշխարհ է, ինչով էլ պայմանավորված է նրա գրավչությունը: Համացանցի հետ կապը չարաշահելու դեպքում դեռահասը մասամբ կարող է կորցնել իրական աշխարհի զգացողությունը և ապրել, այսպես կոչված, վիրտուալ կյանքով: Դա մասնավորապես նշանակում է, որ մարդն իր հասակակիցների և այլ մարդկանց հետ կենդանի շփման փոխարեն գերադասում է հեռակա (համացանցով) հաղորդակցությունը: Սա կարող է խաթարել մարդու բնականոն զարգացումը, որոշ դեպքերում հանգեցնել հոգեկան խեղումների: Համացանցը, ինչպես նաև հեռուստացույցը չարաշահող մարդիկ վտանգ ունեն նաև վնասելու իրենց առողջությունը՝ կարճատեսություն, ողնաշարի ծռվածք և բոլոր այն հիվանդությունները, որոնք կապված են նստակյաց կյանքի հետ:

Այս ամենը թող չվախեցնի ձեզ. ինչպես ամեն ինչ, տեղեկատվական այս միջոցները կդառնան բարիք, եթե նրանցից օգտվենք խելամտորեն և չափի սահմաններում: